Վերապատրաստող կազմակերպություն

ՀՀ ԿԳՄՍ «Մարտունու Տ. Աբրահամյանի անվան ավագ դպրոց ենթակա ուսուցիչների վերապարստում»

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԾՐԱԳԻՐ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Ներառական կրթության կազմակերպման հիմնական սկզբունքները և ուղիները

ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐԸ՝ Վարդենիս

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՅՐԸ՝ Բեյբության Հասմիկ

ՈՒՍՈՒՑԻՉ՝ Մարտիրոսյան Բելա

ԴՊՐՈՑ՝ Սոթքի մ/դ

Վարդենիս **2022**

ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Ներառական կրթության կազմակերպումը ենթադրում է ոչ միայնընդհանուր հայեցակարգի սահմանում և ընդունում, այլև համապատասխան գործողությունների հստակ պլանավորում:

Ներառական կրթության կազմակերպման հաջող փորձը ցույց է տալիս, որ գործընթացն սկսելիս պետք է հաշվի առնել երեք հիմնական գործոն կամ բաղադրիչ՝

ա) հստակ սահմանված արժեքներ, համոզմունքներ, սկզբունքներ, որոնք զարգանում են ներառական կրթության իրականացման ողջ ընթացքում;

բ) ուսումնական հաստատության ռեսուրսների (մարդկային, ֆինանսական, բարոյական) արդյունավետ ու նպատակաուղղված օգտագործում;

գ) համատեղ (դպրոց, ծնող, կրթության կառավարման պետական լիազորված մարմին) մշտադիտարկում (մոնիթորինգ)՝ ներառական կրթության որակն ու ճկունությունն ապահովելու և համակարգում կատարվող փոփոխություններին արագ արձագանքելու նպատակով:

Ներառական կրթության կազմակերպման գործընթացը պայմանականորեն կարելի է բաժանել երկու փուլի՝

ա) նախապատրաստական

բ) իրականացման:

Նախապատրաստական փուլ

Նախապատրաստական փուլում ուսումնական հաստատության տնօրենն ապահովում է՝

1. ներառական կրթություն իրականացնելու համար ՀՀ կրթության և գիտության նախարարի թույլտվությունը;
2. կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, սահմանված կարգով բժշկահոգեբանամանկավարժական(ԲՀՄ) հանձնաժողովի եզրակացության հիման վրա վկայագիր ստացած սովորողների առկայությունը;
3. ուսումնանյութական հարմարեցված միջավայր: Վերոնշյալ պայմանների առկայության դեպքում արդեն դպրոցում պաշտոնապես կազմակերպվում է ներառական կրթություն՝հետևյալ հաջորդականությամբ.

1. Ներառական կրթություն կազմակերպելու համար վերապատրաստման գործուղված մասնագետը (մասնագետները), որի վրա ժամանակավորապես կամավորության սկզբունքով դրվում է դպրոցում ներառական կրթությունը համակարգողի պարտականությունը, դպրոցի բուժաշխատողի հետ ուսումնասիրում է դպրոցի բոլոր սովորողների բժշկական գործերը (Զև 26) և առանձնացնում այն սովորողների գործերը, ովքեր ունեն մտավոր զարգացման, լեզվական, լսողական, տեսողական, հոգեբանական, հենաշարժողական և այլ խնդիրներ: Այս փուլում պետք է ճշտարկել նաև դպրոցի բոլոր ուսուցիչների կարծիքները, քանի որ կարող են լինել սովորողներ, որոնց բժշկական գործերում այս կամ այն պատճառով չի գրանցվել այդ սովորողների կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը: Հայտնաբերված սովորողների բժշկական գործերն առանձնացվում են:

2. Ներառական կրթության համակարգողի պարտականությունները կատարող անձը դպրոցի տնօրենի գիտությամբ և համաձայնությամբ հանդիպում է վերընշված սովորողների ծնողների (օրինական ներկայացուցչի) հետ, բացատրում իրադրությունը և նրանցից վերցնում գրավոր համաձայնագիր՝ երեխային ներառական կրթության մեջ ընդգրկելու մասին: Ծնողի անհամաձայնության դեպքում երեխային ԲՀՄ գնահատման ներկայացնել, հետևաբար՝ նաև ներառական կրթության մեջ ընդգրկել չի կարելի:
3. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողները (ծնողի կամ օրինական ներկայացուցչի հետ) սահմանված կարգով ներկայանում են ԲՀՄ հանձնաժողով՝ հետևյալ փաստաթղթերով.

   ա) սովորողի ծննդյան վկայականի պատճենը,

   բ) սովորողի անձնական գործի (Ձև 26) պատճենը,

   գ) սովորողի ծնողի դիմումը:

   Երբեք և ավելի սովորողների առկայության դեպքում կարելի է ԲՀՄ հանձնաժողովը հրավիրել դպրոց:
4. ԲՀՄ հանձնաժողովի կողմից համապատասխան եզրակացություն ստացած ցանկացած թվով սովորողների առկայության դեպքում դպրոցը կարող է իրականացնել ներառական կրթություն:
5. Դպրոցի տնօրենը, սահմանված կարգով, աշխատանքային պայմանագրեր է կնքում համապատասխան մասնագետների հետ և ձևավորում բազմամասնագիտական թիմ:
6. Այնուհետև սովորողների գործերը ներկայացվում են պետական լիազորված մարմնի ղեկավարին (մարզպետին, Երևանի քաղաքապետին)՝ վկայագրման համար: Վկայագրման ներկայացնելու համար անհրաժեշտ են՝

   ա) դպրոցի տնօրենի դիմումը մարզպետին (Երևանի քաղաքապետին)՝սովորողին վկայագրելու մասին.

   բ) ԲՀՄ հանձնաժողովի եզրակացությունը.

   գ) սովորողի ծնողի (օրինական ներկայացուցչի) դիմումը մարզպետին (Երևանի քաղաքապետին)՝իր երեխային վկայա•բելումասին.

   դ) սովորողի ծննդյան վկայականի պատճենը.

   ե) սովորողի ծնողի (օրինական ներկայացուցչի) անձնագրի պատճենը:

   Յուրաքանչյուր սովորող վկայագրվում է իր բնակության վայրի պետական լիազորված մարմնի (մարզպետի, Երևանի քաղաքապետի) կողմից:
7. Երեխային դպրոց ընդունելիս պետք է ուսումնասիրել նրա անձնական գործը և անհրաժեշտության դեպքում ուղարկել ԲՀՄ հանձնաժողով՝ համապատասխան եզրակացություն ստանալու նպատակով:
8. Դպրոցի տնօրենն ապահովում է համապատասխան ուսումնական յուրքական հարմարեցված միջավայր:

Ներառական կրթության իրականացման փուլ

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողի ուսուցման կազմակերպման և արձանագրման (անհատական ուսումնական պլաններ) մեխանիզմների մշակման, նրա՝ պետական չափորոշիչներին համապատասխան գիտելիքների յուրացման, կարողությունների, հմտությունների ձեռք բերման համար անհրաժեշտ պայմանների ապահովման նպատակով իրականացվում են հետևյալ քայլերը՝

1. կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող յուրաքանչյուր սովորողի կրթությունը կազմակերպելու համար բազմամասնագիտական խումբը նախապես իրականացնում է սովորողի դիտարկում և հետազոտում: Աշակերտի դիտարկումը և հետազոտումը կատարվում են դասապրոցեսում, դասամիջոցներին, բակում,անհրաժեշտության դեպքում՝ համապատասխան մասնագետը կատարում է տնայց;
2. բազմամասնագիտական թիմը, դպրոցի տնօրենը և սովորողի ծնողը, ելնելով սովորողի կրթական կարիքներից, կազմում են նրա անհատական ուսումնական պլանը: Ըստ սովորողների կրթական պահանջների՝ ձևավորվում են համապատասխան անհատական ուսումնական պլաններ;
3. բազմամասնագիտական թիմի անդամները կազմում են սովորողների հետ կատարվող անհատական և խմբային աշխատանքների ժամանակացույցները (գրաֆիկները), որոնց համաձայն յուրաքանչյուր մասնագետ իրականացնում է իր գործունեությունը;

դպրոցի տնօրենը՝

ա) պետական կրթական չափորոշիչներին, ծրագրերին և սովորողի ԱՈՒՊ-ին համապատասխան ապահովում է սովորողի որակյալ կրթություն ստանալու համար անհրաժեշտ պայմանները,

բ) ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպում է ներառված սովորողների սնունդը,

գ) անհրաժեշտության դեպքում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, կազմակերպում է ներառված սովորողների տեղափոխումը տնից դպրոց և դպրոցից տուն (դպրոցի սեփական փոխադրամիջոցով կամ ֆիզիկական, իրավաբանական անձանց հետ կնքված պայմանագրերի հիման վրա),

դ) ներառված մտավոր խնդիրներ ունեցող սովորողի ուսումնական չափորոշիչների և ծրագրերի յուրացման արդյունքների հիման վրա իրականացվում է նրա՝ դասարանից դասարան տեղափոխումը:

ԸՆՏԱՆԻՔԻ, ԴՊՐՈՑԻ ԵՎ ՀԱՄԱՑՆՔԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՓՈԽՆԵՐԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ

Ներառական կրթությունը

- ընդունում է, որ բոլոր երեխաները կարող են սովորել,
- ընդունում և հարգում է երեխաների տարբերությունները՝ տարիքը, սեռը, ծագումը, լեզուն, զարգացման խնդիրները, անհատական առանձնահատկությունները, ընտանիքի սոցիալական կարգավիճակը և այլն,
- ստիպում է կրթական կառույցներին, համակարգերին և մեթոդաբանություններին կրթական գործընթացը կազմակերպել և իրականացնել բոլոր երեխաների կարիքներին համապատասխան,
- հեռահար ռազմավարական նշանակություն ունեցող հիմնախնդրի՝ ներառական հասարակության կառուցման գաղափարի առաջ մղման մասն է,
- դինամիկ և զարգացող գործընթաց է:

Ներառական կրթությունը ենթադրում է համակարգի, այլ ոչ թե երեխայի հարմարեցում

Ներառական կրթությունը հաշմանդամության սոցիալական մոդելի յուրօրինակ ածանցյալն է: Այն ընդունում է, որ բոլոր երեխաները տարբեր են, իսկ դպրոցներն ու հանրակրթական համակարգը պետք է հարմարվեն բոլոր սովորողների[a] զարգացման արատներով և առանց դրանց, անհատական պահանջմունքներին: Սակայն, ներառում չի նշանակում բոլորին ձուլելու կամ միատեսակ դարձնելու ձգտում: Այն ընդունում է, որ երեխաները սովորում են տարբեր արագությամբ, իսկ ուսուցիչներին անհրաժեշտ են հատուկ հմտություններ[a] ուսուցման գործընթացի ճկունությունն ապահովելու համար:

Պարզապես, երեխաներին անհրաժեշտ է հասկանալի, մատչելի դասավանդում: Իսկ դա իր հերթին ենթադրում է երեխայի առանձնահատկություններին, անհատական կրթական պահանջմունքներին, զարգացման տեմպերին, ընդունակություններին և կարողություններին համապատասխանող տարբեր մեթոդների օգտագործում

Ներառական կրթությունը նպաստում է ավելի լայն ներառման

Ըստ հաշմանդամության ասպարեզում միջազգային բաղաբականությամբ զբաղվող "Փրկեք երեխաներին-Մեծ Բրիտանիա" հիմնադրամի, հաշմանդամության ծրագրերի մշակման մեթոդիկայում ներառական կրթությունը արտացոլում է երկու ուղղություն.

1) Աջակցություն նպատակային այնպիսի նախաձեռնություններին, որոնք միտված են սահմանափակ հնարավորություններ ունեցող երեխաների ու նրանց ընտանիքների ներուժը ուղղորդելու և իրացնելու նպատակով ծավալվող գործունեության խթանմանը, հասարակական կյանքին նրանց լիիրավ մասնակցությանը, իրավունքների պաշտպանությանը;

2) Մարտահրավեր է հետում հասարակության մեջ հատուկ կարիքներով մարդկանց նկատմամբ ձևավորված և կայունացած կանխակալ վերաբերմունքին, օգնում է ծնողներին դրականորեն ընկալելու զարգացման խնդիրներ ունեցող իրենց երեխաներին և նպաստում է սոցիալապես առավել ներառմանը:

Երեխաները, անկախ սահմանափակ հնարավորություններ կամ կրթական դժվարություններ ունենալուց, դպրոցն ավարտելուց հետո որոշակի դեր ունեն հասարակության մեջ: Ներառման վաղ սկիզբը մանկապարտեզներում կամ մսուրներում, որոնց հաջորդում են միջնակարգ դպրոցն ու բոլեջը, լավագույն նախադրյալն է ինտեգրված կյանքի համար: Կրթությունը երեխաների կյանքի անբաժան մասն է: Սահմանափակ հնարավորություններ ունեցող երեխաները կարող են և սովորում են հանրակրթական դպրոցներում՝ համապատասխան օժանդակությամբ: Կան այդ նպատակին հասնելու տարբեր ուղիներ.

- Մեթոդաբանությունը մշակվում է տարբեր ընդունակություններով երեխաների ուսուցմանն աջակցելու համար (սրանով լավանում է ոչ միայն հատուկ պահանջմունքներով երեխաների ուսուցման որակը, այլև բոլոր երեխաների ցուցանիշները):
- Բոլոր երեխաները մասնակցում են այն բոլոր միջոցառումներին, որտեղ դասարանը և դպրոցական միջավայրը (մարզական միջոցառումներ, ներկայացումներ, մրցույթներ, էքսկուրսիաներ և այլն) ներառական է:
- Անհատական ուսուցումը աջակցության է արժանանում ուսուցիչների, ծնողների և այլ մասնագետների համատեղ աշխատանքի շնորհիվ:

- Ներառական կրթությունն օգնում է կանխելու երեխաների նկատմամբ խտրականությունը և ստեղծում է հատուկ պահանջմունքներով երեխաներին[a] իրենց համայնքների և ողջ հասարակության իրավահավասար անդամներ լինելու նրանց իրավունքում:

Ճկուն դասացուցակը, ծնողների հետ աշխատանքը, հասարակական կազմակերպությունների հետ փոխգործողությունը, համատեղ արտադասա-բանական աշխատանքը[a] ահա մի քանի եղանակներ, որոնք օգնում են մանկավարժներին ավելի լավ հարմարվել երեխաների հետաքրքրություններին ու կարիքներին, նպաստել այն բանին, որ սահմանափակ հնարավորություններ ունեցող երեխաները ստանան անհրաժեշտ ծառայություններ և աջակցություն:

Ներառական դասարանում՝ առանց սահմանափակ հնարավորություններ ունեցող երեխաների էլ, ճիշտ այնպես, ինչպես սահմանափակ հնարավորություններ ունեցող երեխաների նկատմամբ՝ անհատական մոտեցում կցուցաբերվի: Ընդ որում կարևոր է, որ առկա լինեն հետևյալ գործոնները.

- Ուսուցիչների համագործակցություն: Ոչ մի մանկավարժ չի կարող լավ սովորեցնել իր բոլոր աշակերտներին, եթե չստանա գործընկերների օգնությունն ու խորհուրդները:
- Ծրագրերի հարմարեցում աշակերտների անհատական առանձնահատկություններով պայմանավորված կարողություններին: Ուսուցիչներն օգտագործում են տարբեր մոտեցումներ տարբեր ընդունակություններով, պահանջմունքներով, նախասիրություններով երեխաներին ուսանելու համար:
- Հավասար հնարավորությունների ընձեռում: Մանկավարժը պետք է համոզվի, որ բոլոր աշակերտներն ունեն տեղեկատվությունից, գիտելիքներից ու հմտություններից օգտվելու հավասար հնարավորություն:

Այսօր ժամանակի հրամայական է դառնում, որ դպրոցներն ու տեղական իշխանությունները ստանձնեն այդ իրավունքն իրականացնելու պատասխանատվությունը: Դրա համար պետք է ձեռնարկվեն հետևյալ քայլերը.

- Նախաձեռնել բանավեճեր՝ պարզելու, թե ինչպես են համայնքում հասկանում մարդու իրավունքները:
- Կազմակերպել կոլեկտիվ քննարկումներ և առաջարկել գործնական լուծումներ, թե ինչպես կարելի է մարդու իրավունքների հարցերն ընդգրկել տեղական դպրոցական ծրագրերում:
- Մարդու իրավունքների հարցը կապել կթության մատչելիության հարցի հետ:
- Մարդու իրավունքները պաշտպանելու նպատակով գործունեություն ծավալել սկզբնական, տեղական մակարդակում և ամրապնդել դրանց կապերն ավելի բարձր՝ որոշումների կայացման մակարդակների հետ:
- Խրախուսել համայնքային և մանկական խորհուրդների ստեղծումը, որտեղ կքննարկվեն կրթության մատչելիության հարցերը:

- Մշակել համայնք-դպրոց հարաբերությունների մեխանիզմներ, որոնք կհայտնաբերեն դպրոց չհաճախող երեխաներին, կբերեն նրանց դպրոց և կապահովեն նրանց ուսումը:

Բացի այդ, անհրաժեշտ ռեսուրսներին պետք է համապատասխանի բաղադրական կամքը, տեղական իշխանությունների վրա պետք է միշտ ճնշում •ործադրվի, որպեսզի նրանք կատարեն իրենց պարտավորությունները: Սակայն, վերջնական հաջողության մասին կարելի է դատել միայն բոլոր սովորողներին մատչելի հանրակրթության որակով:

Որտեղ և ինչ փոփոխություններ են անհրաժեշտ. ու±մ է պետք ներգրավել գործի մեջ

- փոփոխություններ համակարգում և դպրոցում
- դպրոցների կառավարման փոփոխություն
- մանկավարժների մասնակցություն
- երեխաների մասնակցություն
- համայնքի մասնակցություն

Փոփոխություններ համակարգում. ի±նչ է անհրաժեշտ

-Կատարել վերլուծություն և ճշտել, թե որտե±ղ են անհրաժեշտ փոփոխությունները

Նախքան ներառական կրթության ծրագրի պլանավորումը և իրականացումը անհրաժեշտ է ընդհանրացնել, թե ողջ կրթական համակարգում որտե±ղ են անհրաժեշտ փոփոխությունները: Մեկ ասպարեզում փոփոխությունները կարող են զրոյի հավասարվել, եթե համակարգի մյուս մասերում փոփոխությունները բացակայում են:

-Հիմնական տեղեկատվության հավաքում

Հատուկ կարիքներով երեխաների համար ներառական կրթության ասպարեզում գոյություն ունեցող ցանկացած բաղադրանությունը հարաբերակցեք տվյալ պայմաններում իրավիճակի և պրակտիկայի հետ: Սակայն, խուսափեք տվյալներ հավաքելու համար միջոցներ և ժամանակ չափից ավելի վատնելուց: Լավ սկիզբ կարող է ծառայել միջազգային գնահատականների և փորձի օգտագործումը, որոնք հետագայում կարելի է լրացնել տեղական ստույգ տեղեկատվությամբ ձեռք բերված արդյունքներով:

Ներառման հաջողությունը կախված է առկա մարդկային և նյութական ռեսուրսների խնամքով և պլանաչափ բաշխումից:

-Ներառական բաղադրանության մշակում

Կրթական քաղաքականություն մշակողները պետք է հասկանան, որ ներառական կրթական համակարգը օգուտ է բերում ոչ միայն հատուկ կարիքներով երեխաներին, այլև հասարակության բոլոր խմբերի երեխաներին: Հասարակության չառանձնացված խմբերի պահանջներին համապատասխանող կրթական քաղաքականությունը հաջողելու ավելի մեծ հնարավորություններ ունի: Յուրաքանչյուր առանձին կատեգորիայի համար քաղաքականության մշակումը մեծ ժամանակ ու միջոցներ է խլում և նպաստում է բաժանմանը:

-Պատասխանատվության ստանձնում

Ավանդական համակարգերում համարում են, որ եթե երեխաները դպրոց չեն հաճախում կամ չեն սովորում, ապա մեղավոր են հենց երեխաները կամ նրանց ընտանիքները: Ներառական համակարգում դրա պատասխանատվության զգալի մասը ստանձնում են դպրոցները: Դպրոցական համակարգերը պետք է պատասխանատվություն կրեն երեխաների ուսուցման համար, ինչը ենթադրում է, որ հենց համակարգերը և ուսուցման մեթոդիկաները պետք է համապատասխանեն երեխաների պահանջմունքներին:

-Մատչելի ուսումնական միջավայրի ապահովում

Ուսումնական միջավայրի մատչելիությունը հսկայական նշանակություն ունի յուրաքանչյուր երեխայի հավասար մասնակցության և լիակատար ներառման համար: Ընտանիքները, ինչպես նաև հենց երեխաները, պետք է անմիջականորեն մասնակցեն մատչելիության հարցերի քննարկմանը: Դրանք կարող են լինել հետևյալ հարցերը. տեղաշարժ և տրանսպորտ, շենքերի ֆիզիկական մատչելիություն, վերաբերմունք, դասավանդման մեթոդիկա, ուսուցման լեզու, ուսուցչի և աշակերտների միջև փոխհարաբերություններ և այլն:

-Ճկուն ուսումնական պլանի առկայություն

Ուսումնական պլանները և քննական համակարգը պետք է համապատասխանեն բոլոր երեխաներին: Ճկուն ուսումնական պլանի դեպքում սովորելու և կրթությունից օգուտ ստանալու հնարավորություն կունենան բոլոր երեխաները, իսկ նրանց ձեռքբերումները կճանաչվեն:

-Համընդհանուր դպրոցական մոտեցում

Դպրոցները պետք է ինքնուրույն դառնան ինչ-ինչ պատճառներով մեկուսացած երեխաների պահանջմունքները բավարարելիս: Համադպրոցական մոտեցման դեպքում կոլեկտիվի բոլոր անդամները

(բոլոր ուսուցիչները, օգնականները, խնամակալները և այլն) ընդգրկված են ներառական մեթոդների ներդրման մեջ: Շատ հաճախ դպրոցում դրանով զբաղվում է միայն մեկ կամ երկու աշխատակից:

Համադպրոցական մոտեցման առաջխաղացումը առանձնահատուկ նշանակություն ունի գյուղական վայրերում, որտեղ դպրոցները հաճախ զրկված են լրացուցիչ աջակցությունից: Դպրոցական կոլեկտիվի բոլոր անդամները պետք է պատրաստություն անցնեն և խորացնեն հատուկ կարիքներով երեխաների ներառման հարցերում իրենց ունեցած գիտելիքները: Բացի այդ, ղեկավարներից պահանջվում են լավ կառավարման հմտություններ:

–Լրացուցիչ ֆինանսավորում

Եթե կրթական համակարգն ունի լրացուցիչ ֆինանսավորում, նշանակում է այն բաշխվում է ըստ մարզերի և շրջանների, բայց ոչ ըստ առանձին դպրոցների: Այսպիսով, դպրոցները ստանձնում են բոլորի երեխաների մասին հոգածության համադպրոցական պատասխանատվություն, և խորհրդատուների կարիք չունեն: Լրացուցիչ ֆինանսավորման հարցերով զբաղվող անձիք ապահովում են այն՝ տեղական կամ համապետական մակարդակում:

Դպրոցների կառավարումը

Ներառական փոփոխություններ իրականացնելիս կարևոր դեր է խաղում որակյալ կառավարումը: Կրթական գերատեսչությունների ղեկավարները և ավագ մանկավարժները ապահովում են դպրոցներին հարկ եղած աջակցություն և օգնում են զարգացնելու միջդպրոցական ցանցը: Դպրոցների ներառման զարգացման համար ղեկավարները կարող են.

– հետևել այն բանին, որ ուսուցիչները ծանրաբեռնված չլինեն

Ղեկավարների կողմից խնամքով պլանավորումը նպաստում է ուսուցիչների ընդունելի ծանրաբեռնվածության հաստատագրմանը: Դա նաև ներառում է դասարանում ընդհանուր աշակերտներին և նրանց, ովքեր ունեն զարգացման խանգարումներ կամ ուսման դժվարություններ:

– խրախուսել լավ ուսուցիչներին

Ղեկավարները կարող են արդյունավետ օգտագործել խրախուսման համակարգը՝ առանձնապես աչքի ընկած ուսուցիչների պարագայում: Դրա համար կարելի է օգտագործել խրախուսումների առկա համակարգը, կամ որակավորումները. զուգահեռ "հատուկ" համակարգեր այստեղ անհրաժեշտ չեն:

– որոշել ժամանակային շրջանակները, որոնք հնարավորություն են ընձեռում ուսուցիչներին հետևելու մեկը մյուսի աշխատանքին

Ուսուցիչների աշխատանքի որակը, նրանց ճկունությունն ու ստեղծագործական մոտեցումը բարձրացնելու առավել արդյունավետ եղանակներից է միմյանց աշխատանքին հետևելու հնարավորության ընձեռումը: Ղեկավարները պետք է պլանավորելիս նախևառաջ հաշվի առնեն այս գործոնը և ուսուցիչներին հնարավորություն տան վերլուծելու իրենց գործունեությունը: Սա նախապատրաստման լավագույն ձևերից մեկն է՝ առանց արտադրությունից կտրվելու: Բացի այդ, ղեկավարները պետք է շարունակ աջակցություն ցույց տան նորովի աշխատել սկսող ուսուցիչներին:

- հայտնաբերել դպրոց չհաճախող երեխաներին

Ղեկավարները պետք է հետևեն, որպեսզի ենթագերատեսչական շրջանում բոլոր երեխաներին գտնեն, ընդունեն դպրոց և ուսման ընթացքում դժվարություններ ծագելիս օգնեն:

- նպաստել բազմասեկտոր համագործակցությանը

Կից ոլորտների հետ (օրինակ՝ առողջապահության մարմիններ կամ սոցիալական ծառայություններ) համագործակցությունը ներառական կրթության կառավարման կարևոր մասն է: Հատուկ կարիքներով երեխաները և նրանց ընտանիքները կարող են տարբեր աղբյուրներից անհրաժեշտ ծառայություններ ստանալ:

Ուսուցիչների նախապատրաստումը

Ուսուցիչները պետք է հիմնական գիտելիքներ ստանան հաշմանդամության ասպարեզից, որպեսզի նրանց վերաբերմունքը և աշխատանքի մեթոդները չխան•արեն հատուկ կարիքներով երեխաներին ուսումնական պլանի նկատմամբ հավասար մատչելիություն ապահովելուն: Նման ուսուցումը պետք է լինի մշտական՝ կարճ դասընթացների (կամ մոդուլների) ձևով և անցկացվի տեղական կրթական միջավայրում՝ ցանկալի է նրանց սեփական դպրոցում: Այն անհրաժեշտ է անցնել և՝ նախքան դպրոցում աշխատանք սկսելը, և՝ արդեն մանկավարժական գործունեության ընթացքում: Կոնկրետ հիմնախնդիրներ ընդգրկող գործնական ուսուցումը անհամեմատ արդյունավետ է տեսական պատրաստությունից: Ըստ էության, եթե ուսուցիչները կարող են կանոնավոր հանդիպել և քննարկել իրենց խնդիրները, զարգացնել իրենց ընդունակությունների նկատմամբ վստահություն, ապա դա, թերևս, անձնակազմի որակավորման բարձրացման առավել արդյունավետ ձև կարող է դառնալ:

Ուսուցիչների պարտականությունները

Ուսուցիչները պետք է հասկանան և ընդունեն այն փաստը, որ եթե բոլոր երեխաներն ունեն կրթության իրավունք, ապա իրենց՝ ուսուցիչների պարտականությունն է ուսուցանել բոլոր երեխաներին:

Ուսուցիչներին այդ պատասխանատվությունը ստանձնելուն մղելը կարող է հաջողության բանալին լինել: Մոտիվացիայի առկայության դեպքում նրանց կարող է անհրաժեշտ լինել կանոնավոր գործնական աջակցություն և կառուցողական հետադարձ կապ: Խրախուսումը կարող է օգտակար լինել հաջողակ (առաջադիմող) ուսուցիչների շահագրգռությանն աջակցելու համար, սակայն դա պետք է իրականացնել խրախուսման և որակավորման առկա համակարգերի միջոցով: Որպես պրպտող (հնարամիտ) մանկավարժ ճանաչված լինելը և տեսնել, թե ինչ արդյունքների են հասնում հատուկ կարիքներով երեխաները[a] արդեն իսկ ուսուցչի համար պարգև է: Հատուկ կարիքներով երեխաների ուսուցման համար լրացուցիչ դրամական պարգևատրումներ վճարելը կարող է հանգեցնել բաժանման:

Դասավանդման մեթոդիկան

Ուսուցման մեխանիկական մեթոդներին սովոր ուսուցիչների համար գուցե դժվար լինի զուգակցել աշխատանքի իր ոճն այն բանի հետ, ինչը ենթադրում է առաջին հերթին դեպի երեխան կողմնորոշված առավել ակտիվ մեթոդների գործադրում: Դասավանդման մեթոդիկայում փոփոխությունները կարող է ներառել. դասասենյակում վերադասավորությունը (որպեսզի երեխաները կարողանան աշխատել փոքր խմբերով), բարեկամական հարաբերությունների զարգացումը (որպեսզի ավագ, կամ լավ սովորող աշակերտներն աշխատեն ուսուցման դժվարություններ ունեցողների հետ), խաղերի, մաթեմատիկայի կամ նոր բառերի ուսումնասիրության համար նախատեսված առկա ձեռնարկների օգտագործումը և այլն: Ուսուցիչները պետք է հնարավորություն ունենան փորձել նոր մեթոդներ, հաղորդակից դառնալ գաղափարներին և հետևել այլ մեթոդիկաներ օգտագործող ուսուցիչների աշխատանքին:

Տեղեկատվության մատչելիություն

Ուսուցիչներին անհրաժեշտ է մատչելի տեղեկատվություն միջազգային փաստաթղթերի մասին, և այն մասին, թե ինչպես կարելի է աշխատանքն առավել ներառական դարձնել: Տեղեկատվությունը այն մասին, թե ինչպես են աշխատում նման պայմաններում մյուս ուսուցիչները, օգնում է մանկավարժներին վերլուծելու սեփական գործողությունները. նրանք վստահություն են ձեռք բերում և ձգտում են պրակտիկայում փորձել նոր գաղափարներ:

Երեխաների մասնակցությունը

"Երեխան երեխային" սկզբունքով աշխատանքի մեթոդներ

Երեխաներն իրենցից ներկայացնում են կրթության մեջ արժեքավոր և հաճախ չպահանջված ռեսուրս: Նրանք, որպես կանոն, ավելի հանդուրժող են հաշմանդամության նկատմամբ, քան իրենց ուսուցիչներն ու ծնողները:"Երեխան երեխային" սկզբունքով մոտեցումը շատ արդյունավետ միջոց է երեխաների մասնակցությունը համախմբելու համար: Երեխաները շատ ակտիվ են լինում իրենց համայնքում

հաշմանդամության նկատմամբ բացասական վերաբերմունքը հաղթահարելու համար[a] հայտնաբերելով դպրոցից դուրս մնացած երեխաներին, օգնելով հատուկ կարիքներով երեխաներին հասնելու դպրոց, դասերի ընթացքում գրառումներ անելով խուլ երեխաների համար, ուսուցանելով հատուկ կարիքներով երեխաներին տանը: Զամբիայում և Լեսոտոյում երեխաները հետազոտություն էին անցկացրել հատուկ կարիքներով երեխաներին հայտնաբերելու և նրանց ծնողներին՝ երեխաների դպրոց հաճախելու անհրաժեշտության հիմնավորման հարցում համոզելու նպատակով:

Խիստ կարևոր է հատուկ կարիքներով երեխաների, երիտասարդության և մեծահասակների ներգրավումը քաղաքականության և գործնական հանձնարարականների մշակման պրոցեսում: Անհրաժեշտ է գործի դնել հատուկ կարիքներով երեխաների և երիտասարդ մարդկանց ոչ մեծ խմբեր և օգնել նրանց արտահայտելու իրենց գերակայություններն ու պահանջմունքները. սա դեպի երեխան կողմնորոշված ու երեխաների առօրյա կյանքում առավել օգտակար կրթության ստեղծման ճանապարհին առաջին քայլն է: Նրանց մասնակցությունը հաճախ կարող է ներառական միջոցառումների մշակման արագացուցիչ ծառայել: Հաշմանդամության հարցերում նրանց գիտելիքներն ու իրազեկությունը պետք է հարգել բոլոր մակարդակներում:

Համայնքի մասնակցությունը

Համայնքի բազմաթիվ անդամները՝ ՀՀՎ աշխատակիցները, ավագանին, հոգևորականությունը, ծնողները, հատուկ կարիքներով մեծահասակները և հենց երեխաները կարող են իրենց ներդրումն ունենալ ներառական կրթության զարգացման մեջ: Առկա մարդկային և նյութական ռեսուրսների օգտագործումը օգնում է զարգացնելու կապերը դպրոցների, ընտանիքների, համայնքների միջև, ինչպես նաև դարձնում է համայնքի անդամներին ներառական կրթության ծրագրերի տեր: Հեռահար նպատակն է ամբողջությամբ ներառական հասարակության ստեղծումը:

Ծնողների ընդգրկումը

Հաճախ հատուկ կարիքներով երեխաների ծնողները կրթություն ստանալու իրենց իրավունքի ուժեղագույն պաշտպաններն են: Նրանք արժանի են աջակցության իրենց նպատակներին հասնելու համար: Սակայն, շատ ծնողներ անտեղյակ են, որ հատուկ կարիքներով իրենց երեխաները իրավունք ունեն ըստ բնակության վայրի դպրոց հաճախելու: Իսկապես, ծնողների հետաքրքրություններն ու նպատակները ոչ միշտ են համապատասխանում իրենց երեխաների կարիքներին ու հետաքրքրություններին: Ծնողներին կարող է օգնություն անհրաժեշտ լինել[a] խմբերում միավորվելու և կրթության մեջ բացառող պրակտիկայի դեմ պայքարելու համար: Այնտեղ, որտեղ հնարավոր է, հատուկ կարիքներով երեխաների ծնողներին պետք է

օգնել հատուկ կարիքներով մարդկանց կազմակերպությունների և համայնքի մյուս խմբերի հետ համատեղ աշխատանքում[a] այդ իրավունքների պաշտպանության գործում:

Ծնողների ներգրավումը ուսուցման գործընթացի մեջ

Դպրոցի մանկավարժների, մյուս աշխատողների և ծնողների մշտական շփումներն ու լավ հարաբերությունները խթանում են սովորողի կրթական առաջընթացը: Ընտանիքը մնայուն է սովորողի կյանքում, մինչդեռ դպրոցը և ծրագրերը՝ փոփոխական: Հենվելով ընտանիքի ուժեղ կողմերի և յուրահատկությունների ճանաչման և ընդունման վրա անհրաժեշտ է խթանել ծնող–դպրոց, ծնող–ուսուցիչ, ծնող–մասնագետ համագործակցությունը:

Այդ նպատակով իրականացվում են՝

- համակարգված և պարբերական սեմինարներ և վերապատրաստումներ՝ ուղղված հատուկ կրթության չափորոշչի պահանջների լուսաբանմանը,
- դպրոցի վերաբերյալ տեղեկատվության տրամադրում (ուսումնական չափորոշչի, ծրագրերի գրքույկներ, ուղեցույցներ ծնողների համար, տեղեկատու նյութեր, օրագրեր),
- դասալսումներ ծնողների կողմից,
- ծնողական ժողովներ՝ տարեկան առնվազն չորս անգամ,
- դպրոցի բաց դռների օր, համատեղ տոնակատարություններ, միջոցառումներ:

Ծնողները պետք է հնարավորություն ունենան մասնակցել դպրոցի կառավարմանը և պատասխանատվություն կրեն իրենց պարտականությունների կատարման հարցում: Դրա լավագույն ձևը դպրոցական խորհուրդների ստեղծումն է: Ընտանիքները պետք է ներգրավվեն իրենց երեխայի կրթությանը վերաբերող կարևոր հարցերի քննարկմանն ու որոշումների կայացմանը, քանի որ ծնողներն ուզում են վստահ լինել, որ դպրոցը իրենց երեխային լիաժեք և համապատասխան ձևով է նախապատրաստում ապագա կյանքին: Այս խնդիրը հանդիսանում է կարևորագույններից մեկը՝ կրթության որակը բարելավելու գործում: Միաժամանակ դպրոցը կարող է մտավախություն ունենալ՝ արդյո՞ք ծնողների ընդգրկվածությունը դիտվում է որպես արժեքավոր միջոց դպրոցների դերը հանրության մեջ բարձրաց–նելու և կարևորելու, ինչպես նաև սովորողների նվաճումների հարցում, թե՞ նրանց ընդգրկվածությունը ավելի է ծանրաբեռնում ուսուցչին և վտանգ է հանդիսանում դպրոցների համար:

Այս հարցերին պատասխանելու համար մշակվել է մի ամբողջ տեսություն, որն ուղղված է հետևյալ հիմնական հարցերի լուսաբանմանը.

– Արդյո՞ք ծնողների ընդգրկվածությունը դրական ազդեցություն ունի սովորողի ձեռքբերումների վրա: Եթե այո, ապա ընդգրկվածության ո՞ր ձևն է լավագույնը:

- Ինչպիսի՞ ազդեցություն ունի ծնողի ներկայությունը սովորողի աշխատանքի արդյունքների, վերաբերմունքի, սեփական անձի ընկալման, դասարանում պահելաձևի և հաճախելու վրա:
- Արդյո՞ք ծնողի ընդգրկվածությունը հավասարապես արդյունավետ է տարրական, միջին և բարձր դասարաններում: Եթե այո, ապա հարկավոր է նշել արդյունքների և ընդգրկվածության մակարդակի դեպքերը, իսկ եթե ոչ՝ նշել և նկարագրել լավագույն տարբերակը:
- Ի՞նչ է հայտնի աղքատ կամ ազգային փոքրամասնություն կազմող համայնքներում ծնողների ընդգրկվածության կամ մասնակցության, ինչպես նաև դրա արդյունավետության վերաբերյալ:
- Ինչպիսի՞ ազդեցություն՝ դրական և բացասական, կունենա կամ ունի ծնողների ընդգրկվածությունը դպրոցների կառավարման բնագավառում:

Ծնողների մասնակցությունից բացի կարևոր է նաև պետական վերահսկողությունը՝ հատկապես չափորոշիչների վերահսկման և լրամշակման հարցերում, իսկ համայնքները շահագրգռություն պետք է ցուցաբերեն կրթակարգով և չափորոշիչով նախատեսված ուսուցման բովանդակության, ուսումնական միջավայրի ապահովման համար անհրաժեշտ ֆինանսական, նյութական միջոցներ գտնելու և ներդնելու հարցում:

Ծնողներն ընդգրկվում են երեխայի գնահատման, այդ թվում դիտարկման, ԱՈՒՊ-ների կազմման և դասի նախապատրաստման գործընթացների մեջ:

<u>Ծնողի իրավունքները և պարտականությունները</u>

<u>Ծնողը պարտավոր է.</u>

- Ապահովել երեխայի ներկայությունը դպրոցում: Աշակերտի բացակայությունները հասցնել մինիմումի:
- Պարտավոր է պահպանել երեխայի հիգիենայի կանոնները:
- Միշտ մասնակցել ժողովներին (բազմամասնագիտական, ծնողական):
- Հարգալից վերաբերմունք ցուցաբերել դպրոցի անձնակազմի նկատմամբ:
- Տանը ապահովել բարենպաստ պայմաններ երեխայի ուսումնական գործունեության համար:
- Մեծ ուշադրություն դարձնել գիտելիքների, սոցիալական հմտությունների զարգացմանը:
- Ընդունել և հարգել դպրոցի օրենքները և կանոնակարգը:
- Զերծ պահել երեխային ընտանեկան խոչընդոտներից, խուսափել սթրեսային իրավիճակներից:
- Հնարավորություն տալ երեխային արտահայտելու իր զգացմունքները:
- Մշակել երեխայի համար արգելքները հաղթահարելու ռազմավարություն, լինել հնարավորինս համբերատար:

- Հաճախակի զրուցել երեխայի հետ, ստեղծել վստահության մթնոլորտ տանը, ներշնչել վստահություն դեպի ծնողը, ուսուցիչը:
- Ժամանակին ապհովել երեխայի այցը հատուկ մանկավարժի հետ անհատական պարապմունքին:

Ծնողը իրավունք ունի.

- Իրավունք ունեն ընտրել երեխայի համար անվճար ուսումնական հաստատություն (դպրոց) անկախ բնակավայրից:
- Պաշտպանել երեխայի օրինական իրավունքները և հետաքրքրությունները:
- Ստանալ տեղեկատվություն դպրոցում մատուցվող ուսումնական և անվտան•ության ծառայությունների մասին՝ (սնունդ, բուժ օգնություն, տրանսպորտ, լրացուցիչ հատուկ պարապմունքներ հետ մնացող աշակերտների համար և այլն):
- Ընտրել ուսուցման ձևը (անհատական, տնային պայմաններում):
- Մասնակցել աշակերտի համար անհատական ուսումնական պլան կազմելու և իրականացնելու գործընթացին:
- Տեղյակ լինել ուսումնական պլանին համապատասխան դասացուցակին:
- Քննարկել ուսումնական պրոցեսում ծա•ած ցանկացած խնդիր՝ կապված թիմի անդամների գործունեության հետ:
- Ժամանակին ապհովել երեխայի այցը հատուկ մանկավարժի հետ անհատական պարապմունքին:

Ուսուցչի դերը

Ուսուցիչը կառավարող է, դիտարկող, օրինակ, խորհրդատու, աջակից, ընկեր, տեղեկացնող և սոցիալական աշխատող

Նա պետք է առաջնորդվի և իմաստալից ուսուցման համար օգտագործի ուսուցման բազմազան ռազմավարություն:

-

Ù»ÏáõË³óáõÙÇó	Ù³ëÝ³·Çï³Ï³Ý ÙÇç³ï³Ûñ
áõëáõóã³Ï»ÝïñáÝÇó	³Ã³Ï»ñï³Ï»ÝïñáÝ
Ù»Ë³ÝÇÏ³Ï³Ý ³ÃË³ï³Ýù	÷áñÓÇ Ù»Í³óáõÙ
³ÃË³ï³ÝùÇÁ í»ñ³ÑëÏáÕ	å³ï³ëË³Ý³ï³áõ

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՑԱՆԿ

1. Առողջապահության Համաշխարհային Կազմակերպություն, 2001, http://www.who.int/countries/arm/en/:
2. Բաց ֆայլ ներառական կրթության մասին "Օժանդակ նյութեր մենեջերների և ադմինիստրատորների համար":
3. Դակարի գործողությունների շրջանակ. Կրթություն բոլորի համար. Մեր ընդհանուր պարտավորությունների կատարումը //տեքստ՝ ընդունված կրթության համաժողովի կողմից, Դակար, Սենեգալ, 2000 ապրիլը 26-28:
4. Կոնվենցիա հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին ՄԱԿ , 1993// ՀՀ- ում ուժի մեջ մտած՝ հոկտեմբերի 22- ին, Երևան, 2010:
5. Կրթության Հատուկ Կարիքների Գործունեության Կառուցվածք, ՅՈՒՆԵՍԿՕ, 1994:
6. Համաշխարհային Կրթական Ֆորում, 2000թ., պար.6
7. Ներառական կրթություն /վերապատրաստման դասընթացի / բովանդակային նյութեր:
8. Ներառման ուղեցույց՝ ապահովելու մատչելի կրթություն բոլորի համար. ՅՈՒՆԵՍԿՕ, 1994:

9. Սալամանկայի հռչակագիր և գործողությունների շրջանակ հատուկ կարիքի կրթության մասին //տեքստ՝ ընդունված "Հատուկ կարիքներ ունեցող անձանց կրթություն. մատչելիություն, որակ" համաժողովի կողմից, Սալամանկա, Իսպանիա, 1994թ., հունիսի 7-10:
10. Զափավոր և ծանր մտավոր հետամնացություն ունեցող երեխաների հետ աշխատող հատուկ մանկավարժի ուղեցույց, Երևան, 2008:
11. Allen, K. E., Schwartz, I. S. (2001) The exceptional child: Inclusion in early childhood education. Albany, NY: Delmar, 27.
12. Florian, L., Rouse, M. (2009) The inclusive practice project in Scotland: Teacher education for inclusive education. Teaching and Teacher Education, 25 (4), 594-601.
13. Leatherman, J., M. (2007) ''I just see all children as children'': Teachers' perception about inclusion, The Qualitative report Vol. 12 (4), 594-611.
14. www.disabilityinfo.am
15. www.edu.am